Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց

Թեմա՝ Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառմամբ հայցական հոլովի ուսուցումը Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում։

Վերապատրաստող, մենթոր՝ Փ. Սարգսյան

Կատարող՝ Մ. Հակոբյան (ուսուցչի օգնական)

Վաղարշապատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….. **3**

ԹԵՄԱ 1. Հայցական հոլովը ժամանակակից հայերենում ……. 6

ԹԵՄԱ 2. Խնդրային և պարագայական հայցականի դրսևորումները Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում ……..… 9

ԹԵՄԱ 3. Հայցական հոլովի իմաստային առումների կիրառումը համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի իրացմամբ ……..… 16

Հավելված …….. 20

Եզրակացություն……...… 25

Առաջարկություն ……..… 27

Օգտագործված գրականության ցանկ…… 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից հայերենը ունի յոթ հոլով՝ հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր հոլով ունի իր ձևը և իմաստը (հոլովը որոշվում է հոլովական ձևի ու հոլովական իմաստի միասնությամբ)։ Ժամանակակից հոլովների շարքում առանձին ուշադրություն պետք է դարձնել հայցական հոլովին, քանի որ վերջինս իր ձևային յուրահատկությամբ տարբերվում է մյուս հոլովներից՝ մի դեպքում նմանվելով ուղղականին, իսկ մյուս դեպքում՝ տրականին։

Ըստ Հանրակրթական դպրոցի «Հայոց լեզու, Գրականություն» ուսումնական բնագավառի առարկայական ծրագրերի հայցական հոլովին աշակերտները ծանոթանում և ուսումնասիրում են հիմնական և ավագ դպրոցներում։ Առաջին անգամ աշակերտները ծանոթանում են յոթերորդ դասարանում՝ անդրադառնալով միայն շարահյուսական գլխավոր կիրառություններին։ Իսկ տասնմեկերորդ դասարանում հոլովներն ուսումնասիրում են առանձին-առանձին։ Տասներկուերորդ դասարանում ուսումնասիրում բոլոր հոլովները միասին։ Հայցական հոլովի իմաստային առումների ուսուցումը ներառված չէ հանրակրթության ավագ դպրոցի՝ տասներկուերորդ դասարանի հայոց լեզվի առարկայական չափորոշիչներում ու ծրագրերում։

Յուրաքանչյուր հոլովի ուսուցմանը հատկացվում է մեկ դասաժամ, որը բավարար չէ նյութն ամբողջովին յուրացնելու համար։ Դրա հետևանքն այն է, որ աշակերտները դժվարությամբ են տարբերում հայցական հոլովը շարահյուսական կիրառության մեջ։ Լեզվի պատմական զարգացման ընթացքում այս հոլովը ենթարկվել է փոփոխության և նմանվել ուղղականին՝ դառնալով նրան համանուն բառաձև, իսկ տրականի հետ համանունությունը ավելի ուշ է ձևավորվել արևելահայերենում։ Շփոթմունքից խուսափելու և աշակերտներին այս հոլովի վերաբերյալ առավել խորքային գիտելիքներ հաղորդելու համար առաջարկում ենք ավագ դպրոցում հայցական հոլովի իմաստային առումների ուսուցմանը հատկացնել որոշակի ժամաքանակ, որի

վերջնարդյունքը կլինի այն, որ աշակերտները կտարբերակեն հայցական հոլովը ուղղական և տրական հոլովներից։

Ամփոփելով վերը ներկայացվածը, կարող ենք փաստել, որ սույն հետազոտության թեմայի արդիականությունը, գործնական նշանակությունն ու կարևորությունը պայմանավորված է վերը նշված հանգամանքներով։ Աշակերտների կողմից հայցական հոլովի իմաստային առումների ըմբռնումը, գործնականորեն ամրապնդումը, լեզվամտածողության զարգացման գործում նրա ունեցած դերի գիտակցումը կհանգեցնի, որպեսզի աշակերտն ինքն առաջադրի հետազոտական հարցադրումներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և եղանակներ։ Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի համատեքստում, կատարի ընդհանրացումներ։

Հետազոտության նպատակը։ Սույն հետազոտության նյութ դարձնելով հայցական հոլովի իմաստային առումների քննությունը և ուսուցումը դպրոցում՝ նպատակ ենք ունեցել ընտրել այնպիսի մեթոդական համալիր, որը հենվելով համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների վրա կնպաստի աշակերտների կողմից նյութի արդյունավետ յուրացմանը։ Նպատակ ենք ունեցել ընդգծելու հայցական հոլովի իմաստային առումների խորքային գիտելիքների հաղորդման կարևորությունն ու նշանակությունը աշակերտների համար։ Հայցական հոլովի իմաստային առումների ուսումնասիրման ընթացքում նպատակ ենք ունեցել նաև սովորողների լեզվամտածողության զարգացումը դարձնել գերխնդիր, որովհետև շատ կարևոր է մայրենի լեզվի խորքային գիտելիքների իմացությունը դպրոցական աշակերտների համար։

Հետազոտության խնդիրները։ Սույն հետազոտության ընթացքում նշված նպատակի իրագործման համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել հայցական հոլովը
2. Մեկնաբանել հայցական հոլովի իմաստային առումները
3. Տարբերակել հայցական հոլովի իմաստային առումները և կատարել համապատասխան վարժություններ

4. Կատարել հայցական հոլովի իմաստային առումների ուսուցումը ըստ Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակի:
5. Մշակել, ընդգծել և առաջարկել նոր մոտեցումներ՝ ամրապնդելով նյութը
6. սահմանել հայցական հոլովի իմաստային առումների ուսուցման քայլաշար՝ հիմնվելով դիդակտիկայի պարզից դեպի բարդը ուսուցման սկզբունքի վրա:

Հետազոտության գործնական նշանակությունը: Սույն հետազոտության մեջ ներկայացված է ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթի հարցեր, որոնց լուծումները իրականացվել է առաջադրվող զանազան մեթոդների օգնությամբ: Հետազոտության մեջ ներկայացրել ենք թեմայի ուսուցման քայլաշար, մեթոդական որոշակի նյութեր, որոնք հետագայում կարող են օգտակար լինել ուսուցչին դասապրոցեսը արդյունավետ իրականացնելու համար:

Հետազոտության տեսական նշանակությունը: Տվյալ նյութի հիման վրա կատարել ենք համակարգումներ: Հետազոտության մեջ ներկայացրել ենք ժամանակակից մեթոդներ, որոնք կարող են կիրառվել գործնականորեն: Մեթոդների օգնությամբ աշակերտները հեշտությամբ կյուրացնեն, կամրապնդեն նյութը:

Լեզվի զարգացման ընթացքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, որի հետևանքով հայցական հոլովի դրսևորման մեջ առաջացել են մի շարք նոր ձևեր, իսկ որոշ կիրառություններ՝ դարձել հնաբանություններ: Դրանք իրենց ազդեցությունն են թողել իմաստային առումների վրա: Համեմատելով երեք լեզվաբանների աշխատությունները՝ փորձել ենք այդ իմաստային առումները համեմատական քննության ենթարկել, ուսումնասիրել համաժամանակյա կտրվածքով: Լեզվական նյութի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների հիման կատարել ենք որոշակի ընդհանրացումներ, համակարգումներ: Այս առումով մեր աշխատանքն ունի տեսական կարևոր նշանակություն:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Սույն աշխատանքը կազմված է ներածությունից, երեք թեմայից, եզրակացությունից, առաջարկությունից, գրականությունից և հավելվածից:

Հետազոտության ծավալը համակարգչային 28 էջ է:

ԹԵՄԱ 1. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայցականի՝ առանձին հոլով լինելու հարցում լեզվաբանները միակարծիք չեն. լեզվաբանների մի մասը հայցական հոլովը չի ընդունում: Մ. Աբեղյանը մերժում է հայցականի (նաև սեռականի)՝ առանձին հոլով լինելու հանգամանքը՝ համարելով գրաբարի և մասամբ օտար լեզուների քերականությունների ազդեցության ու մեխանիկական ընդօրինակման հետևանք: Այս հիմքով 1906 թվականին հրատարակած իր «Աշխարհաբարի քերականություն» աշխատության մեջ ներկայացնում է հինգ հոլով՝ սեռականն ու հայցականը համարելով արդեն ջնջված, վերացած հոլովներ: Մ. Աբեղյանն իր տեսակետը հիմնավորում է «Աշխարհաբարի հոլովները» վերնագրով գրքույկով: Այս գրքույկի դրույթների դեմ «Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ» հոդվածով հանդես է գալիս Ս. Մալխասյանցը, ինչից հետո սկսվում է լեզվաբանական բանավեճ: Մ.Աբեղյանը Ս. Մալխասյանցին պատասխանում է «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909 թ.) գրքույկով, որի դեմ հանդես է գալիս «Դարձյալ հայցական հոլովը» պատասխան հոդվածով: Մ. Աբեղյանը, իր սկզբունքների դեմ նոր առարկություններ չգտնելով, վեճը համարում է ավարտված: Նա հայցական հոլովը չէր ընդունում, որովհետև հայցականը իր հոլովական առանձին ձևը չուներ, իսկ «հոլովը ձևի վրա է հիմնված. չկա առանձին ձև, չկա և առանձին հոլով[1]»: Հեղինակը հոլովները առանձնացնելիս հենվում էր միայն ձևական կամ ձևաբանական հատկանիշի վրա, ինչին ի պատասխան Ս. Մալխասյանցը գրել է. «Եթե հոլովները լոկ բառի ձևեր նշանակեին, այդ դեպքում մեր գրական լեզվի մեջ ոչ թե կլիներ հինգ հոլով, ինչպես ընդունում է պարոն Աբեղյանը, և ոչ թե յոթ հոլով, ինչպես ընդունում են մյուս բոլոր քերականությունները, այլ տասը-քսան և ավելի հոլովներ…[2]»: Եթե սոսկ բառի ձևը հաշվի առնել, հետևաբար ամեն մի առանձին բառաձև ևս պետք է հոլով համարել: Հայցական հոլովը ձևային յուրահատկություն ունի. այն, որ մի դեպքում համանուն է ուղղականի, մյուս դեպքում՝ տրականի հետ: «Հայցականը թեպետև աշխարհաբարում չունի սեփական ձև, բայց ունի յուրահատուկ կիրառություն, որով զանազանվում է թե՛ ուղղականից և

[1] Աբեղյան Մ., Աշխարհաբարի հոլովները, 1908, Երևան, էջ 13:
[2] Մալխասյանց Ս., Նոր դպրոց, Երևան, 1908, ապրիլ, էջ 46-47:

թե՛ տրականից, այսինքն՝ հայցականը ձևով ո՛չ ուղղական է, ո՛չ տրական, այլև առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի, ուստի և հենց այս առանձնահատկության շնորհիվ պետք է առանձնապես հիշվի քերականության մեջ[3]»,- գրել է Ս. Մալխասյանցը:

Հայցական հոլովը անձի դեպքում նման է տրականին, նաև իրանիշ գոյականի անձի առման դեպքում, իրի դեպքում՝ ուղղականին, նաև անձնանիշ գոյականի իրի առման դեպքում: Հայցականի շուրջ շփոթը առաջացել է այն ժամանակ, երբ այն կորցրել է գրաբարում այս հոլովին հատուկ *q* նախդիրը (եզակի թվում), *u* հոլովակերտը (հոգնակի թվում) և ձևով նմանվել ուղղականին, այսինքն՝ «հայցականի ձևային յուրահատկությունը մեր լեզվում առաջացել է պատմականորեն[4]»: Տրականի հետ համանունությունը ավելի ուշ է ձևավորվել արևելահայ աշխարհաբարում, որովհետև այստեղ անձի և իրի իմաստ արտահայտող գոյականները, ինչպես և առումները, աստիճանաբար հոլովակազմության մեջ տարբերություն առաջ բերեցին, որի հետևանքով հայցականը համանուն դարձավ նաև տրականին: Լեզվում կան իրի առում և անձի առում հասկացությունները: Երբ անձնանիշ գոյականը ձևով նմանվում է հայցականին, ապա գործածվում է իրի առմամբ, իսկ երբ իրանիշ գոյականը նմանվում է տրականին, ապա գործածվում է անձի առմամբ:

Հինգ հոլովի տեսության երկրորդ քննադատությունը սկսվեց երեսունական թվականներին Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի կողմից: Գ. Սևակը ևս հայցականը առանձին հոլով համարելու տեսակետն էր պաշտպանում և դրա համար փորձում գտնել ձևական հիմունք, բայցևայնպես ընդունում էր, որ հայցականը «…մակաբուծորեն օգտվում է ուղղական և տրական հոլովի ձևերից»: Նա չէր ընդունում հոլովների տարբերակման միայն ձևային կամ ձևաբանական սկզբունքը և կարծում էր, որ ձևի և բովանդակության հակադրամիասնության մեջ առաջնությունը պետք է տալ հոլովի իմաստին, ուստի սեռականն ու հայցականը համարում էր առանձին հոլովներ[5]:

---

[3] Մալխասյանց Ս., նշվ. ա շխ., էջ 51:

[4] Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., տեսական և գործնական հայոց լեզու (ձևաբանություն), բուհական ձեռնարկ, Երևան, 2018, էջ 57:

[5]. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 252:

Մ. Աբեղյանի տեսակետը պաշտպանում էր Հ. Բարսեղյանը: Նա մի առանձին աշխատություն է հրատարակել, որտեղ ներկայացրել է հոլովների մասին Աբեղյանի տեսակետը և դրա շուրջ ծավալված քննարկումները, քննադատությունները՝ ակնհայտորեն ցույց տալով իր համակրանքը հինգ հոլովի տեսության հանդեպ[6]: Հինգ հոլովի տեսության պաշտպանն էր նաև Մ. Ասատրյանը, որը նույնպես հայցականը որպես առանձին հոլով չէր ընդունում՝ հիմք ընդունելով հոլովների տարբերական ձևային հատկանիշը: Ի հակադրություն հայցականը ձևային կողմով առանձին հոլով չհամարողներին՝ Գ. Սևակը գրել է. «Սեռականը նույնացնելով տրականին և ապա հայցականը նույնացնելով տրականին՝ ֆորմալիստները ոչ միայն ճիշտ չեն արտացոլում հոլովական այդ իրողությունները, այլև գռեհիկ համահարթման են ենթարկում երեք տարբեր, ըստ իրենց իմաստի և ձևավորման, հոլովները միայն նրա համար, որ դրանք չունեն տարբեր ձև կամ վերջավորություն[7]»: Անհիմնավոր է այն տեսակետը, թե հայցականը վերացել է և դրա գործառույթներն անցել են ուղղականին և տրականին: Հայցականը ունի իր առանձին հոլովական գործառույթը: Հինգհոլովականները հայցականը չեն ընդունում ձևաբանության մեջ, բայց պահպանում են շարահյուսության մեջ՝ հակասելով իրենց իսկ առաջադրած սկզբունքներին: Հայցականն իր արտահայտած առարկայական հարաբերություններով տարբերվում է ուղղականից, տրականից և անգամ իմաստով հակադիր է ուղղականին:

Հայցականը գոյականի լրացում սակավ է դառնում, նախադասության մեջ հիմնականում կապվում է բայի հետ և դրսևորում խնդրային ու պարագայական հարաբերություններ: Ներկայացնենք առավել տարածում գտած և գործածական իմասային առումները՝ ասվածը հիմնավորելով Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից քաղաբերված օրինակներով:

---

[6] Տե՛ս Հ. Բարսեղյան, Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967, էջ 11:

[7] Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 252:

ԹԵՄԱ 2. ԽՆԴՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՀԱՅՑԱԿԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Գ. ՄԱՀԱՐՈՒ «ԾԱՂԿԱԾ ՓՇԱԼԱՐԵՐ» ՎԻՊԱԿՈՒՄ

Ուղիղ խնդրի հայցական: Նախադասության մեջ ուղիղ խնդիր դառնալը հայցական հոլովի հիմնական պաշտոնն է, ուստի այս հոլովի գլխավոր իմաստը ուղիղ խնդրի իմաստն է: Մ. Աբեղյանը այս իմաստին տվել է կրող խնդրի հայցական անվանումը և նշել, որ այն ցույց է տալիս անձ կամ իր, որի վրա իբրև մի նպատակի անցնում է անցողական բայերի գործողությունը, և որը կրում է գործողության ազդեցությունը[8]: Գործողությունը և իր առարկան տարբեր հարաբերություններ են արտահայտում, ըստ այդմ էլ դրսևորում են իմաստային մի քանի նուրբ տարբերություններ: Այսպես, Վ. Քոսյանը բերել է հետևյալ օրինակները՝ *տեսնել Գրիգորին, մաքրել սեղանը, կառուցել տուն* և այս օրինակների հիման վրա ներկայացրել գործողության և առարկայի ոչ նույնական հարաբերությունները[9]: Նշված երեք կապակցություններում գործ ունենք հայցականով դրված ուղիղ խնդիրների հետ, բայց դրանցից յուրաքանչյուրը գործողության հետ յուրահատուկ հարաբերություն ունի: *Գրիգորին, սեղանը, տուն* բառերն այն անուններն են, որոնք իրենց վրա կրում են *տեսնել, մաքրել, կառուցել* ներգործական բայերի գործողությունները: *Գրիգորին* բառը ցույց է տալիս այն առարկան, որը գործողության սոսկ օբյեկտ է և ոչ մի փոփոխություն չի կրում: Երկրորդ կապակցության մեջ (*մաքրել սեղանը)* հայցականով դրված բառը ցույց է տալիս այն առարկան, որը փոփոխության է ենթարկվել գործողության կատարումից հետո: Առաջին կապակցության ուղիղ խնդրից տարբերվում է նրանով, որ փոփոխության է ենթարկվում: *Կառուցել տուն* կապակցության մեջ *տուն* բառը ցույց է տալիս այն առարկան, որն իբրև հետևանք առաջանում է գործողության կատարումից հետո, այսինքն՝ իբրև գործողության արդյունք: Ուղիղ խնդրի այս երրորդ իմաստը մի նրբիմաստ էլ ունի, երբ հայցական հոլովով դրված բառը կազմված է լինում բայի արմատից, օրինակ՝ *պարը պարել, երգը երգել* և այլն: Իմաստային այս տարբերությունները նկատի ունենալով՝ ուղիղ խնդրի հայցականը քննում ենք չորս

---

[8] Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 415:

[9]. Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 258-259:

ենթատեսակներով: Գ. Մահարու «Փաղկած փշալարեր» վիպակում հանդիպում են ուղիղ խնդրի բոլոր տեսակներով օրինակներ:

Ա. Գործողության անմիջական առարկայի հայցական: Ցույց է տալիս այն առարկան, որն ընկնում է բայի գործողության ոլորտը, բայց ոչ մի փոփոխություն չի կրում: *«Դժվար էր պատկերացնել նման անհարիր **զույգ**» [էջ 19]: «Ես լսում եմ թիթեղե դույլերի **զնգզնգոց**» [էջ 21]:*

Բ. Ազդվող, փոփոխվող առարկայի հայցական: Ցույց է տալիս այն առարկան, որը փոփոխություն է կրում գործողության արդյունքում: *«Ես մաքրեցի իմ կերզե **ոտնամանները**» [էջ 18]: «Նա ուղղում է իր մաշած **հագուստը**» [էջ 21]:*

Գ. Հետևանքի ուղիղ խնդրի հայցական: Ցույց է տալիս այն առարկան, որը ստեղծվում է իբրև գործողության արդյունք *«Իոնասն իր բարակ ժպիտով և նույնքան բարակ մատներով **ամաններ** էր ձուլում» [էջ 22]: «Մամոն առաջիններից չէր, որ ճամբարային **ընտանիք** էր կազմում» [էջ 30]:*

Դ. Ներքին ուղիղ խնդրի հայցական: Իմաստով հետևանքի ուղիղ խնդիր է, բայց այս դեպքում լրացում դառնում է բայի արմատից կազմված գոյականը: *«Էն **սրբոդներին** էլ կսրբեն» [էջ 107]: «Քայլում է նա իր **քայլը**» [էջ 164]:*

Ուղղության հայցական: Ցույց է տալիս այն առարկան, որին ուղղվում է գործողությունը: *«Մարքսի փողոցից ապրանքատարը ուղղվեց պետական կրկեսի **փողոցը**» [էջ 112]: «Երբ հասանք չորրորդ հարկը, թեքվեցինք **աջ**» [137]:*

Վ. Քոսյանն իր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» գրքում հայցականի խնդրային կիրառությունների մի քանի իմաստային առում է քննել, որոնք այժմ մեր լեզվին բնորոշ չեն և հնաբանություններ են: Դրանցից են՝ ***մատուցման հայցականը*** *(հիմնականում բարբառային կիրառություն է)*, ***հանգման հայցականը*** *(հիմնական ձևը տրականն է)*, ***միջոցի հայցականը*** *(հիմնական ձևը գործիականն է)*, որոնք արդի հայերենում գործուն չեն և սկսել են գործածվել նախդրազրկման ազդեցությամբ: Գրաբարում այս իմաստներն արտահայտվում էին նախդիրներով և հայցականով, բայց երբ նախդիրները դուրս մղվեցին, աննախդիր հայցականը արտահայտեց այս իմաստները: Այս խմբի մեջ որոշ վերապահումով պետք է ներառել նաև ***վերածման հայցականը***, որը ցույց է տալիս այն առարկան, որին վերածվում,

փոխարկվում է մի բան: Վ. Քոսյանը տվել է այն բայերի ցանկը, որոնք, ըստ նրա, ստանում են վերածման հայցական լրացում, ինչպես՝ *բաժանել, վերածել, փոխել, փոխարկել, փոխադրել* և նման սակավաթիվ բայեր, բայց, կարծում ենք, որ այժմ այս բայերը վերածման իմաստը գլխավորապես արտահայտում են տրական հոլովի հետ՝ բացառությամբ մեկ-երկու դեպքերի: Վերածման իմաստը հիմնականում արտահայտվում է տրական հոլովով, իսկ հայցականով կիրառությունները հազվադեպ են հանդիպում և գնում վերացման: «Արդի գրական հայերենում վերածման հայցականը համարյա վերացել է, սակայն այդպիսի գործածության դեռևս հանդիպում ենք»,- գրել է Վ. Քոսյանը[10], իսկ Վ. Առաքելյանի կարծիքով այն «մեր գրական լեզվից իսպառ ջնջվել է»[11]: Վ. Առաքելյանը վերածման հայցականը համարել է *երկրորդական խնդրի կամ կրկնակի հայցականի* տեսակ: Վերածման հայցականին անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել մի դեպքի՝ *դառնալ* բայի հետ գործածությանը: Լեզվաբանների կարծիքները այս հարցում չեն հատվում. մի մասը դարձյալ բայի հայցականով լրացումը համարում է ուղիղ խնդիր (Վ. Քոսյանն այս տեսակետին էր հարում), մի մասը՝ ստորոգելի, բայց կարծում ենք, որ նման կապակցությունները անվանաբայական բաղադրյալ ստորոգյալ են: Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում այսպիսի իմաստներով օրինակների չենք հանդիպում, որովհետև այս իմաստները արդի հայերենում հնաբանություններ են:

Տեղի հայցական: Հայցականը տեղի իմաստով շատ լայն գործածություն ունի ժամանակակից հայերենում: Ցույց է տալիս գործողության կատարման տեղը: Տեղի հայցականը արդի հայերենում իմաստային տարբերակումներ ունի. մի դեպքում հանդես է գալիս իբրև շարժում ցույց տվող բայերի գործողության նպատակակետ՝ կոչվելով ուղևորության տեղի հայցական[12], մյուս դեպքում հայցականը փոխարինում է ներգոյականի, երբեմն էլ տրականի իմաստներին և դառնում դադարում ցույց տվող բայերի լրացում՝ անվանվելով դադարման տեղի հայցական: Այս տերմինը գործածել է Վ. Առաքելյանը «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական

[10] Քոսյան Վ., նշվ. աշխ., էջ 265:
[11] Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 46:
[12] Ուղևորության տեղի հայցական տերմինը գրաբարի քերականությունից է գալիս:

կապակցությունների իմաստային առումները» գրքում: Այսպիսով, տեղի հայցականը քննում ենք երկու իմաստով՝ ուղևորության տեղի հայցական և դադարման տեղի հայցական:

Ա. Ուղևորության տեղի հայցական: Ցույց է տալիս այն տեղը, ուր ուղևորվում, գնում, շարժվում է գործողը: *«Դուրս եմ գալիս **բակը**» [էջ 100]: «Գյուղացիներն իրենց աղունը տանում էին հարևան գյուղի **ջրաղացը**» [էջ 110]: «Դու գնում ես **տուն**» [էջ 116]:*

Բ. Դադարման տեղի հայցական: Բայի լրացումը ցույց է տալիս գործողությունը պարունակող տեղը: Լրացում դառնում են հիմնականում տեղ ցույց տվող գոյականները: Այս հայցականը համարժեք է ներգոյականին, երբեմն էլ տրականին: *«Այրում են նրանց գրքերը, որոնք նետված են **բանտերը**» [էջ 105]: «Մի **տեղ** գնացքը կանգնեց» [157]:*

Ժամանակի հայցական: Ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը: *«Վերահաս **կիրակի օրը** թնդաց համբավը» [էջ 27]: «Երկրորդ հարվածն իջավ իմ գլխին **երրորդ օրը**» [էջ 102]:*

Չափի հայցական: Ցույց է տալիս գործողության կատարման չափը, քանակը: Ինչպես հայտնի է, նախադասության մեջ չափն ու քանակը արտահայտվում են մակբայներով և գոյականներով: «Չափ ու քանակի հայցականը միայն գոյական կամ գոյականացած բառերով է արտահայտվում, իսկ դրանք նախադասության մեջ հանդես են գալիս թվական վերադիրներով, որոնք միասնաբար լինում են չափի ու քանակի պարագա»,- նկատել է Վ. Առաքելյանը[13]: Մ. Աբեղյանը այս իմաստին տվել է չափ ու քանակի հայցական անվանումը և սահմանել. «Հայցականը ցույց է տալիս չափ, կշիռ և արժեք[14]»: Այս սահմանումից ենթադրելի է, որ հեղինակը արժեք նշանակող հայցական լրացման իմաստը ներառել է չափի իմաստի մեջ՝ իբրև արժեք ու գին ցույց տվող բայերի խնդիր: Արժեքային չափ ցույց տվող հայցական լրացումները Վ. Առաքելյանը համարել է գին կամ արժեք արտահայտող բայերի լրացում, առանձնացրել է չափ ու քանակի հայցականից և ներկայացրել որպես գնի կամ արժեքի հայցական, որը ցույց է տալիս այն չափը կամ միավորը, որչափ

[13] Վ. Առաքելյան, նշվ. աշխ., , էջ 56:
[14] Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 414:

գնահատվում կամ արժևորվում է մի այլ առարկա: Իմաստային այս առանձնացումը Վ. Առաքելյանը պատճառաբանել է այսպես. «Այս հայցականը կարելի է համարել նաև չափ ու քանակի հայցական, սակայն սա ավելի առարկայական բովանդակություն ունի, քան մյուսը[15] », այնուամենայնիվ ոչ թե խնդիր է, այլ պարագա, այսինքն՝ արտահայտում է գործողության հատկանիշը: Առավել ընդունելի ենք համարում գին կամ արժեք արտահայտող հայցականի ներառումը չափի հայցականի մեջ՝ որպես դրա առանձին նրբիմաստ և ենթատեսակ այն հիմքով, որ հայցականով արտահայտված չափը կարող է արտահայտել զանազան չափային հարաբերություններ: Վ. Քոսյանը առանձնացրել է չափի հայցականի մի քանի ենթատեսակներ՝ *ժամանակային չափի, տարածական չափի, ծավալային չափի, կշռային և այլ չափի հայցական*[16]*:*

Ա. Ժամանակային չափի հայցական: Ժամանակակից հայերենում չափի հայցականի ամենից տարածված տեսակն է: Սովորաբար հանդես է գալիս ժամանականիշ գոյականով և որևէ լրացումով (թվականով, դերանվամբ կամ այլ ձևով), բայց կարող է արտահայտվել նաև առանց լրացումների հայցականով, թեև վերջին ձևը քիչ է տարածված: *«Ես նստում էի գետափին **տասից-տասնհինգ բոպե**» [էջ 20]: «**Յոթանասունհինգ օր** հաշվեցի ես այդ մենախցում» [էջ 103]: «**Մի բոպե** ես լռեցի և ես ինձ զգացի այնպես, ինչպես բեմ մտած մարդը» [էջ 104]:*

Բ. Տարածական չափի հայցական: Բայի լրացում դառնում են տարածական չափ ցույց տվող գոյականները որևէ լրացմամբ (թվական, դերանուն և այլն): *«Նրանց զինեցին բահերով, քլունգներով և հրամայեցին փոսերը փորել **մեկ մետր**» [էջ 25]: «Չափեցին բավականին մեծ մի տարածություն, որ ընդգրկում էր **մեկ հեկտար**» [էջ 25]:*

Գ. Ծավալային չափի հայցական: Բայի լրացում դառնում են ծավալային չափ արտահայտող գոյականները, որոնք կարող են լինել ինչպես հաստատված չափի միավորներ, ինչպես՝ *լիտր,խորանարդ,դույլ,տակառ* և այլն, այնպես էլ պայմանական՝ *գրպան, տուն, սայլ, մեքենա* և այլն: *«Այսպես էր ապրում ճամբարի բնակչության մեծ*

[15] Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 57:
[16] Քոսյան Վ., նշվ. աշխ., էջ 279:

*մասը, որ կազմում էր **իննսունհինգ տոկոս**» [էջ 31]: «Ամեն մի վագոն **երկու դույլ** ոչ սառը ջուր ստացավ» [էջ 155]:*

Դ. Կշռային և այլ չափի հայցական: Բայի այս լրացումը ցույց է տալիս գործողության կշռային և այլ կարգի չափը: Լրացումն արտահայտվում է կշիռ և այլ չափ ցույց տվող գոյականով, ինչպես՝ *գրամ, կիլոգրամ,տոննա…* և նրա լրացմամբ:*«Հիմա նա երազում միայն հաց է տեսնում…բանտային գորշ և խառնածին այն հացը, որ կշռում է **հինգ հարյուր գրամ**»: «Ջերմաչափ միայն Ժոզեֆինա Եռնեստովնան ուներ, և հաճախ այն ցույց էր տալիս **քառասուն**» [էջ 37]:*

Ե. Արժեքային չափի հայցական: Բայի այս լրացումը ցույց է տալիս գործողության արժեքային չափը: Լրացում դառնում են արժեք ցույց տվող գոյականները՝ *դրամ, ռսկի, արծաթ, ռուբլի, դոլար* և այլն: *«Այս աղջիկը ազատության մեջ **հազարներ** կարող է աշխատել» [էջ 23]: «Մնացորդն ստացվեց **40**» [էջ 118]:*

Նպատակի հայցական: Ցույց է տալիս գործողության կատարման նպատակը: *«Կեցցե…այս ի՞նչ երջանկություն է, մեզ **աքսոր** են տանում…» [էջ 128]: «Մեզ չեն տանում **գնդակահարություն**, մեզ տանում են **աքսոր**, հյուսիս» [էջ 128]:*

Վիճակի և ձևի հայցական: Ցույց է տալիս գործողության կատարման վիճակը և ձևը: Այս հայցականը գոյացել է տարբեր ծագում ունեցող ձևերից: Հայցականը այս իմաստով սակավ է կիրառվում, այն էլ մեծ մասամբ լրացյալի հետ դարձվածային արժեքով: *«Նստում են **ափսեները ձեռքները**. ամեն մեկի առաջ իր՝ օրվա ընթացքում խնայած հացն էր», [էջ 124]: «**Բամբակած շալվարները հագները**՝ կալանավորները կավ էին հունցում» [էջ 132]: **«Ականջավոր գլխարկը ձեռքը,** ներս մտավ Մամոն» [էջ 136]:*

Կրկնակի հայցական: Կան բայեր, որոնք մի հայցականի փոխարեն երկու հայցականով են խնդիր առնում: *«Քննիչը բոլորի **առավելությունները** համարում էր **թերություններ**, ինչին հաջորդում էր աքսորը» [124]: «Ես **ինձ** զգում եմ **հանցագործ**» [էջ 156]:*

Այսպիսով, Հայցական հոլովը նախադասության մեջ գլխավորապես դառնում է բայի լրացում, դրսևորում խնդրային և պարագայական հարաբերություններ: Մենք ավարտական աշխատանքի երկրորդ գլխում քննեցինք հայցական հոլովի ավելի

գործածական իմաստային առումները, դրանց դրսևորած իմաստային նրբությունները և հիմնավորեցինք Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից քաղված օրինակներով: Նկատել ենք, որ վիպակում հայցական հոլովով դրված 2652 բառերի գերակշիռ մասը գործածվել է պարագայական իմաստներով: Անհրաժեշտ է նշել, որ որոշ բայեր իրենց խնդրառական ճկունության հետևանքով մի քանի իմաստներով լրացումներ են ստանում: Ժամանակի ընթացքում հայցականով մի շարք կիրառություններ փոփոխություններ են կրում՝ հնանում են, վերածվում են կայուն կապակցությունների, դարձվածքների, որը շատ հաճախ պայմանավորվում է բայի սեռի փոփոխությամբ, որը հանգեցնում է նաև խնդրառության փոփոխության:

ԹԵՄԱ 3. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԻՐԱՑՄԱՄԲ

Հոլովների ուսուցումը ճիշտ և նպատակաուղղված իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել յուրաքանչյուր հոլովը առանձին, ծանոթանալ նրանց վերջավորություններին և իմանալ՝ յուրաքանչյուրը ինչ հարցերի է պատասխանում: Թեման հեշտ յուրացնելու համար (բացի վերը նշվածներից) անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նոր տեխնոլոգիաների կիրառմանը, մեթոդների ընտրությանը և դրանք ճիշտ կիրառելու վրա՝ առաջացնելով հետաքրքրություն աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելու համար: Մեթոդների իրականացումը երեխաների մոտ խթանում է հետաքրքրությունն առարկայի հանդեպ, ակտիվացնում է դասարանը, զարգացնում՝ որոնողական, ստեղծագործական կարողությունները, համագործակցային մեթոդներով աշխատելու ունակությունը, աշակերտների մոտ ապահովում է գիտելիքին հասնելու ճանապարհին գործուն մասնակցություն, ձևավորում է նրանց մոտ կարողություններ և հմտություններ, դարձնում նրանց գիտելիք ձեռքբերող և ակտիվ յուրացնող: Հոլովների ուսուցումը դասավանդվում է հանրակրթական դպրոցների յոթերորդ, տասնմեկերորդ, տասներկուերորդ դասարաններում: Հոլովների ուսուցմանը հանրակրթական դպրոցում յոթերորդ և տասնմեկերորդ դասարաններում հատկացված է յոթ դասաժամ, այսինքն՝ մեկական ժամ յուրաքանչյուր հոլովին: Տասներկուերորդ դասարանում հատկացված մեկ ժամ բոլոր հոլովների կրկնության համար: Սակայն 7-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների համար նախատեսված թեմայի բովանդակությունը միմյանցից տարբերվում են նյութի ծավալով: Կարծում ենք, որ մեկ ժամը բավարար չէ հայցական հոլովի խորքային ընկալման համար, ինչի հետևանքն էլ աշակերտների խոսքում խնդրառական սխալներն են ու այս հոլովի չտարբերակումը: Հիմնվելով այս առկա խնդիրների վրա առաջարկում ենք ավագ դպրոցի 12-րդ դասարանում հայ գրականության ժամերին «Ծաղկած փշալարեր» վիպակը ուսումնասիրելուց հետո հայոց լեզվի դասերին մեկ ժամով ուսումնասիրել հայցական հոլովի իմաստային առումները՝ դրանք քննելիս

հենվելով ծրագրային նյութից ընտրված օրինակների վրա: 12-րդ դասարանի աշակերտների հետ (հիմնական դպրոցում արդեն ստացել են բավարար գիտելիքներ հայցական հոլովի վերաբերյալ, 11-րդ դասարանում ևս մեկ անգամ անդրադարձել և ամրապնդել են թեման) այս թեման ուսուցանելիս մենք պետք է հենվենք աշակերտների ունեցած գիտելիքների վրա, մեթոդների օգնությամբ վեր հանենք ունեցած գիտելիքները թեմայի շուրջ, քանի որ նոր գիտելիքներ ձեռք բերելու՝ աշակերտների հնարավորությունը մեծ մասամբ կախված է նրանց ունեցած նախնական գիտելիքների պաշարից, և «այն աշակերտները, որոնք ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից[17]»:

12-րդ դասարանում ուսուցիչը ոչ թե պետք է դառնա պատրաստի գիտելիքների փոխանցող, այլ պետք է ստանձնի ուղղորդողի դեր՝ հնարավորություն տալով նրանց մոտ զարգացնելու քննադատական մտածողությունը, և ինքնուրույն վերլուծություններ կատարելու հմտությունները: Հոլովների իմաստային առումների իմացությունը կնպաստի խոսքում խնդրառական սխալներից խուսափելուն, կօգնի ընկալել հոլովված բառերի դրսևորումները խոսքում, աշակերտները կխորացնեն իրենց գիտելիքները հոլովների վերաբերյալ՝ առնչվելով իրենց անծանոթ իմաստային առումներին, հստակ կտարբերակեն անձնանիշ գոյականների՝ հայցականով կիրառությունները տրականով կիրառություններից: Այս ամենի արդյունքում կզարգանա աշակերտների լեզվամտածողությունը[18]: Աշակերտների մոտ, որպեսզի զարգանա նաև կապակցված խոսքը կարող ենք բառային աշխատանքներից բացի կատարել նաև տեքստային աշխատանքներ՝ զարգացնելով նաև բանավոր խոսքը: Բանավոր խոսքի զարգացման վրա կարևոր է բնագրով աշխատելը, քանի որ գեղարվեստական գրականությունը բացի միջառարկայական կապ լինելուց զարգացնում է թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը, հարստացնում բառապաշարը: Այս ամենի հետ մեկտեղ պետք է ուշադրություն դարձնել օրինակներին: Նյութը որքան շատ օրինակների վրա ներկայացվի , այնքան ավելի հեշտ և արդյունավետ կլինի: Եվ

[17] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 11:
[18] https://lib.armedu.am/ (28.03.2023, 17:55)

ուսուցիչը մեկի փոխարեն երկու կամ երեք օրինակ բերի, ապա նյութը հասկացող աշակերտների թիվը էապես կավելանա[19]:

Թեմայի դասավանդման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները կիրառել տարբեր մեթոդներ, ուսումնական հնարներ: Թեման ներկայացնել համակողմանի, կատարել վերլուծություններ, ինքնուրույն-հետազոտական աշխատանքներ, գիտելիքի ձեռքբերման գործում ապահովել նրանց գործուն մասնակցությունը՝ ամրապնդելով և ընդլայնելով աշակերտների ինքնուրույն աշխատելու որակները: Նյութի հեշտ յուրացնելու գործում մեծ դեր ունեն նաև դիդակտիկ նյութերն ու տեսասահիկը: Ավագ դպրոցում ուսուցիչը պետք է դառնա ոչ թե պատրաստի գիտելիքների փոխանցող, այլ՝ ուղղորդող:

Դասի մուտքից մեծ բան է կախված, ուստի անհրաժեշտ է այն անցկացնել կազմակերպված: Դասի նախապատրաստական փուլում անհրաժեշտ է վերհանել աշակերտների նախնական գիտելիքները հոլովների վերաբերյալ: Նոր նյութը ուսուցանելիս ուսուցիչը հենց այս գիտելիքների վրա պետք է հենվի: Գիտելիքները վերհանելու հարցում կարող ենք օգտվել **«Մտագրոհ», «Հարցեր կամ հարցադրումներ»** մեթոդներից: Սովորողների համար կողմնորիչ դեր են կատարում հարցերի կամ հարցադրումների մեթոդը: Այս մեթոդը կարևոր միջոց է, որպեսզի աշակերտների մտածողությունը խթանվի, տեղեկատվությունը հիմնավոր ընկալվի և համակարգվի: Առանձին հոլովներին անդրադառնալիս կարելի է կիրառել Խառնված հերթականություններ մեթոդը՝ տվյալ թեմայի շուրջ աշակերտների հետաքրքրությունը խթանելու և նախնական գիտելիքները վեր հանելու համար: Առանձին կպչուն թղթերի վրա կարող է գրված լինի այն հարցերը, որոնց պատասխանում են հոլովները, կանոնը, վերջավորությունները, օրինակներ,հոլովման ենթարկված բառեր: Աշակերտները կատարելով առաջադրանքը կվերհիշեն թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքները: Վերհիշելուց հետո ուսուցչի խնդիրը պետք է լինի նյութի բովանդակության հաղորդումը: Թեմայի ուսուցման ժամանակ հարկավոր է ոչ միայն ապահովել

[19] Ս. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 17:

աշակերտների ակտիվ մասնակցությունը գործընթացին, այլ խմբային աշխատանքների, մեթոդների միջոցով մատուցել նյութը: Նյութը ամրապնդելու համար ուսուցիչը կարող է կիրառել տարբեր հնարներ, միջոցներ, որոնք առաջին հերթին կպարզեն թե որքանով են աշակերտները յուրացրել դասը: Ուսուցիչը կարող է բացի դասագրքի վարժություններից նախօրոք կազմել առաջադրանքներ,կատարել **Կիսատ նախադասություն մեթոդը** : Պատասխանելով հետևյալ հարցերին թե ուսուցչի և թե աշակերտների համար պարզ կլինի թե որտեղ է բացթողումները:

20

[20] Խաչատրյան Ս., նշվ աշխ., էջ 40:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Դաս պլան

Առարկա՝ Հայոց լեզու

Դասարան՝ XII

Դասի թեմա՝ Հայցական հոլովի նրբիմաստները

Դասի նպատակները՝ աշակերտները

-կսովորեն հայցական հոլովի իմաստային առումները,

-կկարողանան դրանք տարբերակել,

-կկարողանան որոշել հայցական հոլովով դրված բառերի նրբիմաստները,

-կխուսափեն խնդրառական սխալներից:

Անհրաժեշտ նյութեր- պաստառ, նկար, դասագիրք, քարտեր, տեսասահիկ ,

«Ծաղկած փշալարեր» վիպակ

Դասի ընթացքը

Ուսուցիչը աշակերտների նախնական գիտելիքները պարզելու համար առաջարկում է գծել Т-ձև աղյուսակ, որի մի կողմում աշակերտները գրում են հայցական հոլովի այն բոլոր շարահյուսական կիրառությունները, որոնք ծանոթ են իրենց, իսկ երկրորդ հատվածը, որտեղ գրելու են նոր անցնելիք իմաստները, կլրացնեն տանը: Սա կարելի է նաև բանավոր կազմակերպել:

Հայցական հոլով	
Ուղիղ խնդիր	
Տեղի պարագա	
Ժամանակի պարագա	
Չափի պարագա	

Դասը կառուցվում է «Ուսումնական նվաճումներ» մեթոդի փուլերի համաձայն՝ դասախոսություն -> խմբային աշխատանք -> անհատական աշխատանք: Սկզբում ուսուցիչը ներկայացնում է նոր նյութը:

Տեսասահիկի վրա երևում է վիպակից քաղված չորս օրինակ՝ հայցական հոլովով դրված ուղիղ խնդրի իմաստային տեսակներով կամ ուսուցիչը նույնը գրում է գրատախտակին:

Դժվար էր պատկերացնել նման անհարիր **զույգ:** (գործողության անմիջական առարկայի հայցական)

Շարունակեց ոտներով *հունցել* **կավը:** (ազդվող, փոփոխվող առարկայի հայցական)

Եգիպտական **բուրգեր** *էինք կառուցում:* (հետևանքի հայցական)

Ագռավներն ու դեղձանիկները *երգում են* **երգը:** (ներքին ուղիղ խնդրի հայցական)

Աշակերտներին հանձնարարում է որոշել հայցական հոլովով դրված բառերի շարահյուսական արժեքները: Աշակերտները կպատասխանեն, որ բոլորն էլ ուղիղ խնդիրներ են, որին կհաջորդի հարցը, թե ինչով են իրարից տարբերվում այդ ուղիղ խնդիրները, ընդ որում, ուսուցիչը նախապես ասում է, որ ուշադրություն դարձնեն բայիմաստին: Աշակերտները կփորձեն տրամաբանել, որից հետո ուսուցիչը կասի, որ ուղիղ խնդիրը չորս դրսևորում ունի և օրինակների վրա կբացատրի:

1-ին օրինակում լրացումը գործողության ոլորտից դուրս է, 2-րդ օրինակում լրացումը գործողության ազդեցության տակ փոփոխության է ենթարկվում, 3-րդ օրինակում լրացումը հանդես է գալիս իբրև գործողության արդյունք, իսկ 4-րդ օրինակում լրացումը դրվում է գործողությունն արտահայտող բառի հիմքով:

Նույն ձևով կատարվում են տեղի և չափի հայցականների իմաստային բաժանումները: Յուրաքանչյուր իմաստի անդրադառնալիս տեսասահիկի վրա ցուցադրվում են տվյալ իմաստի սահմանումը, այդպիսի լրացում ստացող բայերի

խմբերը, ինչպես նաև մի քանի բնագրային օրիանակներ: Տեսասահիկի վրա երևում է տեղի հայցականը:



Ուսուցիչը ներկայացնում է, որ տեղի հայցականը երկու ենթաիմաստ ունի՝ ուղևորության տեղ և դադարման տեղ: Ուղևորության տեղը դառնում է շարժում ցույց տվող բայերի լրացում, օրինակ՝ *«Մեկ-մեկ բարձրանում էին **վագոն»,*** իսկ դադարման տեղը դառնում է ոչ ուղևորություն ցույց տվող բայերի լրացում, օրինակ՝ *«Մի **տեղ** գնացքը կանգնեց»:* Աշակերտները սա հեշտությամբ կհիշեն հակադրման սկզբունքով:

Որոշ դժվարություն կարող է առաջացնել նաև չափի հայցականը: Չափի հայցականի տեսակները հեշտ հիշելու համար ուսուցիչը այն ներկայացնում է գծապատկերի տեսքով



Լրացումները արտահայտում են գործողության

Ա) ժամանակային չափը- ***Յոթանասունհինգ օր*** *հաշվեցի ես այդ մենախցում:*

Բ) տարածական չափը- *Չափեցին բավականին մեծ տարածություն, որ ընդգրկում էր* ***մեկ հեկտար****:*

Գ) ծավալային չափը- *Կեսօրին վռիկ էին տալիս* ***մի շերեփ****:*

Դ) արժեքային չափը- *Խնդրում եմ ամառանոց մեկնելու կապակցությամբ բաց թողնել* ***300 ռուբլի****:*

Ե) կշռային և այլ չափը- *Բուշլատը քաշում էր երևի* ***մեկ փութ****:*

Աշակերտները ուսուցչի խոսքից գրառումներ են անում կամ կարող են օգտվել տեսասահիկում ներկայացված նյութերից: Դասարանը բաժանվում է խմբերի և աշխատում սղագրի վրա՝ միմյանց օգնելով հասկանալ նյութը կամ նյութի անհասկանալի մասերը: Ընթացքում կարող են հարցեր տալ ուսուցչին. սա խմբային աշխատանքի փուլն է: Անհատական աշխատանքը կատարվում է վիպակի բնագրով: Յուրաքանչյուր աշակերտ տրված ժամանակամիջոցում տարբեր կիրառություններով օրինակներ է փնտրում: Յուրաքանչյուր ճիշտ օրինակ մեկ միավոր է բերում, իսկ վերջում անհատական միավորները գումարվում են իբրև խմբի ընդհանուր միավոր, և որոշվում է հաղթող թիմը:

Ուսուցիչը տեսասահիկի միջոցով ցուցադրում է բնագրից քաղված տասը օրինակ կամ քարտեր է տալիս և հանձնարարում աշակերտներին որոշել տվյալ նախադասություններում հայցական հոլովով դրված բառերի նրբիմաստները:

Հիտլերը վառում է նրա **գրքերը**:

Կեցցե…այս ինչ երջանկություն է, մեզ **աքսոր** են տանում:

Երկու տարի ես ապրեցի No 12 ընդհանուր բանտասենյակում:

Իոնասն իր բարակ ժպիտով և նույքան բարակ մատներով **ամաններ** էր ձուլում:

Վերահաս **կիրակի օրը** թնդաց համբավը:

Գեպեուի ամբողջ կազմը վերին **Երուսաղեմ** կուղարկեն:

Կամերայի պատերին նկատում է **մակագրություններ**:

Այս աղջիկը ազատության մեջ **հազարներ** կարող է աշխատել:

Նա թացում է մաքուր **թաշկինակը** ջրով և ամեն անգամ **քսան-քսանհինգ կաթիլ** կաթեցնում հիվանդների բորբոքված լեզուներին:

Քայլում է նա իր **քայլը**:

Այս աշխատանքը կատարելուց ու քննարկելուց հետո ուսուցիչը հանձնարարում է «Քառաբաժան» մեթոդի նմանությամբ մեթոդ, որը կօգնի ստուգել, թե ինչ սովորեցին աշակերտները, ինչն էր իրենց համար դժվարություն ներկայացնում:

Այս բաժնում գրվում են դասի ընթացքում սովորած գիտելիքները, թեմայի հիմանական հասկացությունները:	Այս բաժնում գրվում է այն ամենը, ինչը աշակերտի համար նոր էր դասի ընթացքում:
Այս բաժնում գրվում են նոր նյութի այն հասկացությունները, որոնք լավ չեն յուրացվել, լավ չեն հիշում:	Այս բաժնում գրվում են թեման յուրցանելու ընթացքում առաջացած դժվարությունները:

Տնային աշխատանքի հանձնարարում: Գ.Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից դո՛ւրս գրել հայցական հոլովի յուրաքանչյուր իմաստից երեքական օրինակ և մի քանի նախադասություն ենթարկե՛լ շարահյուսական վերլուծության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով հայցական հոլովի իմաստային դրսևորումները Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում՝ հանգել ենք մի շարք եզրակացությունների:

1.Հայցական հոլովով դրված բառերի գերակշիռ մասը գործածվել է պարագայական իմաստներով, մասնավորապես տեղի, ժամանակի և չափի իմաստային առումներով, որովհետև գոյականները այս կիրառություններում համարյա սահմանափակում չունեն:

2.Ուղիղ խնդրի հայցականի բազմաթիվ օրինակների ենք հանդիպում. հատկապես շատ են գործողության անմիջական առարկայի հայցականով օրինակները, որոնք գործածվել են բազմաթիվ բայերի կողքին՝ նկատել, համակրել, լսել, տեսնել, սիրել նայլն: Հետևանքի և ազդվող, փոփոխվող հայցականների իմաստային առումների նույնպես հանդիպել ենք վիպակում իբրև սահմանափակ թվով բայերի լրացում՝ պատրաստել, ձուլել, գրել, կառուցել, ստեղծել, հունցել, կոկել, խաշել, վառել և այլն: Ուղիղ խնդրի հայցականի տեսակներից առավել քիչ գործածվել է ներքին ուղիղ խնդրի հայցականը, որից հանդիպում է ընդամենը վեց օրինակ:

3.Մատուցման, հանգման, միջոցի հայցականները վիպակում չեն հանդիպում, քանի որ արդի հայերենում այս իմաստային առումները հնաբանություններ են: Սրանց մեջ որոշակի վերապահումով ներառվում է նաև վերածման հայցականը, որով դրված օրինակները բնագրում շատ քիչ են:

4.Վիպակում հաճախադեպ են տեղի (ուղևորման և դադարման) և ժամանակի հայցականներով օրինակները: Ուղևորման տեղի հայցականով կիրառությունները հատկապես հանդիպում են մտնել, հաճախել, դուրս գալ, տանել, գնալ փոխադրել բայերի կողքին, դադարման տեղը՝ երևալ, թողնել, կանգնել, մնալ, ապրել բայերի կողքին: Համարյա սահմանափակումներ չունեն նաև չափի հայցականով կիրառությունները՝ ժամանակային չափի, տարածական չափի, ծավալային չափի, կշռային և այլ չափի, արժեքային չափի հայցականները: Որպես ժամանակային չափի

հայցական լրացումներ հանդես են եկել որևէ լրացումով (թվականով, դերանուն) ժամանականիշ գոյականները, տարածական չափի հայցական լրացումներ դարձել են մետր, կիլոմետր, հեկտար, քայլ (որևէ լրացումով), ծավալային չափի հայցական՝ տուփ, շերեփ, բաժակ, դույլ, կշռային և այլ չափի հայցական՝ գրամ, տոննա, փութ (որևէ լրացումով), արժեքային չափի հայցական՝ հազարներ, ռուբլի և այլ չափի միավորներ:

5. Ունենք որոշ եզրահանգումներ նաև թեմայի ուսուցման և մեթոդական համալիրի առնչությամբ: Տրական և հայցական հոլովների իմաստային առումների ուսուցումը առավել արդյունավետ կլինի համագործակցային մեթոդներով կազմակերպելու դեպքում՝ «Եռաստիճան հարցազրույց», «Շրջագայություն պատկերասրահում», «Կենտրոններով աշխատանք», «Ուսումական նվաճումներ», «Խմբային հետազոտություն» և այլն:

6.Հայցական հոլովի իմաստային առումների իմացությունը կնպաստի խոսքում խնդրառական սխալներից խուսափելուն, կօգնի տարբերակելու հոլովված բառերի դրսևորումները խոսքում, աշակերտները կխորացնեն իրենց գիտելիքները հոլովի վերաբերյալ՝ առնչվելով իրենց անծանոթ իմաստային առումներին, հստակ կտարբերակեն անձնանիշ գոյականների՝ հայցականով կիրառությունները տրականով կիրառություններից: Այս ամենի արդյունքում կզարգանա աշակերտների լեզվամտածողությունը:

7. Առաջադրած մեթոդական համակարգը բավական արդյունավետ կարող է լինել աշակերտների ձևաբանական գիտելիքները հարստացնելու գործում, հատկապես ավագ դպրոցի հումանիտար հոսքում սովորողների հիմնական մասը կարող է ուսումը շարունակել բուհերի մասնագիտական ֆակուլտետներում, հետևաբար հայցական հոլովի նրբիմաստների ուսուցումը նույնիսկ անհրաժեշտ է այն դասարաններում, որոնք համալրված են բանասիրական ուղղվածություն ունեցող սովորողներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտության արդյունքներն, ինչպես նաև վերոնշյալ փաստերն ու վերլուծությունն առաջարկում եմ ավագ դպրոցի 12-րդ դասարանում հայ գրականության ժամերին «Ծաղկած փշալարեր» վիպակը ուսումնասիրելուց հետո հայոց լեզվի դասերին մեկ ժամով ուսումնասիրել հայցական հոլովի իմաստային առումները՝ դրանք քննելիս հենվելով ծրագրային նյութից ընտրված օրինակների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, 1908, 84 էջ:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, 699 էջ:
3. Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, 298 էջ:
6. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան, 1989, 432 էջ:
7. Բարսեղյան Հ., Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967, 76 էջ:
8. Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., տեսական և գործնական հայոց լեզու (ձևաբանություն), բուհական ձեռնարկ, Երևան, 2018, 293 էջ:
10. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, 74էջ: Էլեկտրոնային տարբերակը՝ http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf:
11. Մալխասյանց Ս., Նոր դպրոց, Երևան, 1908, ապրիլ:
12. Մահարի Գ., Ծաղկած փշալարեր, Երևան, 1988, 192 էջ:
13. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, 350 էջ:
14. Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, 487 էջ:
15. https://lib.armedu.am/ (28.03.2023, 17:55)